տանէն հայոց նամակօք նմա տուեցեալ և կամ ինքն վասն իւր անկեցեալ։

ԳԼՈՒԽ ՄԿԵ.

Ամենայն զոր ոք քաղեսցի վայտ յանտառէ իւրմէ, մի խլիցէ արմատ ծառոյն եթէ գուցէ վասն յատկապէս բարութեան հանել հարկաւորեսցի արմատն 'ի տեղւոյ նորա, պարտ է կամ տնկել այլ ծառ, կամ վարել ցորեան, կամ տնկել այգի, կամ շինել տուն զի երկիր մի ճեռացէ ամայի։

ԳԼՈՒԽ ՄԿԶ.

Ամենայն աղքատ կարող է մտանել ամենայն անտառ եթէ տէրունի եթէ ժողովրդոց հաւաքել թուփ, միրգ, մեղր, և ձու թռչնոց վասն կարեաց իւրոց, մերթ հատուցանելոյ ոչինչ 'ի ոչ ումեք։

ԳԼՈՒԽ ՄԿԷ.

Ով ոք որ սպանիցէ առջ և գայլ որքան գլուխ և տուտ առջոյ և գայլից յանձնեն 'ի դրունս իշխանի աշխարհին յայնմիկ 'ի տանէ հայոց շնորհեսցեն նմայ ըստ իւրաքանչ գլխոյ մի դահեկան երծաթ և գլուխն թաղեսցեն երկիր ճեռացէ ներքոյ պահակի երիս աւուրս։